

13 Ապա թե ոչ խոստովանեսցիս ի Քրիստոս միածին Որդին Աստուծոյ, զոր նախ յառաջ քան զամենայն՝ Յայր ի բնութենէ իւրմէ բաւական իւրոյ բնութեան հայրութեանն ծնաւ ծնունդ կատարեալ միածին, նոյն նման զուգակից, եւ աթոռակից եւ արարչակից. որ վասն սիրոյն նորա սիրեաց զմեզ, առ սեր մեր առաքեցաւ ի Յաւրէ Կոյսն սուրբ Մարիամ, եւ երեւեցաւ մարդ ի կնոջէ այն՝ որ նման էր բնութեան իւրոյ ծնողին, եւ ի բնութենէ ունէր զբնութիւն Յաւրն կերպարանաց հաւրն իւրոյ, մարմնովն վասն մեր եղեւ իւրովք կամաւք ի կերպարանս ծառայի: 14 Եւ քանզի անկան մարդիկ ինքնակամ կամաւք ի ծառայութիւն, արդ ինքն Տէր եղեւ ի կերպարանս ծառայութեանն, զի ի ծառայութենէ ազատեսցէ զմեզ: 15 Չի ի սկզբանէն յորժամ առնէր Աստուած զարարածս, յետուստ արար զմարդն՝ յերեւոյթ եւ յաներեւոյթ իւրոյ զաւրութեանցն ի մի եւ նոյն ժողովեալ. եւ այսպէս եւ զամենայն ի նոյն պնդեալ ձուլեաց զարարածս, զոր եւ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց իւրոց արար. եւ եղ զնա իշխան անձնիշխան իւրոց կամաց: 16 Վասն որոյ նախանձու սատանայի ապականեալք հնացան ի բանսարկութիւն խարդախութեան պատրանացն: 17 Իսկ Տէր եկն յայց ելեալ կորստականին, ծնաւ ի Կուսէն ի մարդկան կերպարանս, զի արասցէ խաղաղութիւն յերկինս եւ յերկրի, եւ ածցէ զիւր Յայրն ծնաւդ ի հաշտութիւն ընդ արարածս իւր՝ մարդակերպ պատկերան, զի յանդիման լիցին ամենայն մերժեալ արարածքն աներեւոյթն Աստուծոյ:

18 Ապա յիրաւի ուրեմն ի նորոգման արարածոց, զամենայն վերստին նորոգէ. զի եթէ իցէ ոք ի Քրիստոս նոր՝ արարած: 19 Չի այն որ հինն էր՝ էանց, արդ աւասիկ եղեւ նոր ամենայն. զի եկն էառ զմարդկան կերպարանս, եւ ինքեամբ դարձեալ զամենայն նորոգեալ հաստատեաց: 20 Ինքն եղեւ աւրինակ մերոյ կենդանութեանս, անդրանիկ ամենայնի մեռելոցն՝ մեռանելովն. եւ նախ ի մեռելոցն յարութեամբն, զի յայտնի արասցէ ինքեամբ զամենայն. զի զմեզ առանց փոխման արասցէ հոգւով, եւ անմահ մարմնով. զի մի՛ միայն մարդիկ յանփոփոխումն հոգւոյն հայեցուք, այլ յանմահութիւն մարմնոյն. զի եւ աներեւոյթքն դարձեալ եւ բանաւոր զաւրութիւնքն ամենայն անփոփոխմանս այսմիկ ընդ մեզ ակն կալցին: 21 *Քանզի ամենայն արարածք ապատեսցին ի ծառայութենէ անտի ապականութեան՝ յապատութիւն փառաց Որդոյն Աստուծոյ*^ա: 22 Չի առ այն, ասեն, որ ի մէնջ ի Կուսէ անտի մարդ ծնաւ Աստուածն, որ մեք աստի առժամայն ի հաստատութենէն թաւթափեալք, եւ հանդերձեալ ժամանակին ի լաւագոյնսն հասեալք ամենեքին, հայեցեալք սպասեալք ակն ունիմք ի սկզբանէն յարարիչն եւ յառաջնորդն նորոց արարածոց: 23 Քանզի ծնունդ եւ կերպարանք է նա աներեւութիւն Աստուծոյ, միածին ծնունդ Յաւր,

^ա Հմմտ. Հռոմ. Ը 21: